ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Ք. Գավառ 15.03.2012թ.

Նախագահում էր մարզպետ Ն. Պողոսյանը, մասնակցում էր մարզի խորհրդի 92 անդամներից 82-ը:

Մասնակցում էին մարզպետի տեղակալներ Ա. Ղուկասյանը, Գ. Ստեփանյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, իրավապահ մարմինների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի հաշվետվությունը 2011 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:
   /Զեկ. Ն. Պողոսյան – մարզպետ/

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2011թ անչափահասների կողմից կատարված հանցագործությունների և իրավախախտումների կանխարգելման ուղղությամբ կատարված աշխատանքների ու 2012թ հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին:
   /Զեկ. Վ. Մարգարյան - ՀՀ Գեղարքունիքի մարզի դատախազ/

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2012 թվականի համայնքային բյուջեների կազմման գործընթացի և ս/թ հունվար, փետրվար ամիսներին սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների մասին:
   /Զեկ. Ա. Սահակյան – ֆինանսական և սոցիալ - տնտեսական զարգացման վարչության պետ/

4. Այլ հարցեր:

Արտահայտվեցին՝

Ի. Ասատրյանը - մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ
Վ. Հովհաննիսյանը - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Վ. Հովհաննիսյանը - գ. Մարտունի համայնքի ղեկավար

Մարզխորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Ն. Պողոսյանը:

1. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝

1) ապահովել համայնքների 2012 թվականի առաջին եռամսյակի բյուջեների համամասնական կատարումը.

2) վերանայել համայնքների 2012 թվականի բյուջեների ցուցանիշները, ճշգրտել և վերջնական տեսքով համայնքների ավագանիների կողմից հաստատված բյուջեները ներկայացնել մարզպետարան.

4) մինչև ս/թ մարտի վերջը ավարտել գարու սերմացուի արժեքի հետ վերադարձը.

5) մինչև ս/թ մարտի 19-ը ավարտել պարարտանյութի քանակների վերաբաշխումը.

6) ավարտել քաղաքացիական պաշտպանության պլանների կազմումը և հաստատված պլանները ներկայացնել ըստ պատկանելիության.

7) մինչև ս/թ մարտի 22-ը համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի հետ միասին մասնակցել լիազոր մարմնի կողմից ընտրական տեղամասերի կազմավորմանը.

8) մինչև ս/թ մարտի 24-ը սահմանել տեղամասային կենտրոնները և այդ մասին տեղյակ պահել լիազոր մարմնին, համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին.

9) սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող ընտրողների ընտրական իրավունքի իրականացման մատչելիությունն ապահովելու համար տեղամասային կենտրոնների շենքերի շքամուտքերում կառուցել ժամանակավոր թեք հարթակներ.

10) հետևել, որ մինչև ս/թ մարտի 27-ը ընտրողների ցուցակները փակցված լինեն տեղամասային կենտրոններում՝ բոլորի համար տեսանելի տեղերում:

11)առանձնակի ուշադրություն դարձնել սոցիալապես անապահով ընտանիքների անչափահասներին, անհրաժեշտության դեպքում ցուցաբերել նյութական օգնություն:

2. Մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնին /վարիչ Մ. Գալոյան/ ու կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը /պետ Գ. Բադալյան/՝ ոլորտի գործունեությունը իրականացնել 2012 թվականի փետրվարի 20-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի դատախազի, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի, ՀՀ Գեղարքունիքի մարզային վարչության պետի և ՀՀ ԱՆ ՔԿՎ ԱՊԿ բաժնի Գեղարքունիքի բաժանմունքի պետի կողմից համատեղ ստորագրված <<ՀՀ Գեղարքունիքի մարզի անչափահասների շրջանում հանցավորության դեմ տարվող պայքարի համատեղ միջոցառումների պլան>>-ի համաձայն և կատարված աշխատանքների մասին պարբերաբար զեկուցել մարզպետին՝ վերը նշված պլանով նախատեսված ժամկետներում:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ